ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 184-Ա/3 «30» 05 2025թ.

«ՄՈՆԻԿ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՄՆԷԱՃԱՊՁԲ-25/65» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնահատող հանձնաժողովի մայիսի 20-ի որոշումը առ այն, որ «ՄՈՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (Հավելված N 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացված էր 2024 թվականի համար և բացակայում էին հրավերով պահանջվող 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջարկված ապրանքների արտադրողը, ֆիրմային անվանումը և մոդելը), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից ամբողջությամբ չեն շտկվել՝ կրկին Հավելված N 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացված էր 2024 թվականի համար և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«ՄՈՆԻԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02275352, ք. Երևան, Հաղթանակ թաղամաս 1-ին նրբանցք 1/11) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5/30/2025

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**